

ՎԻԼԶԵԼՄ ԴԻԼԹԱՅԻ ՊԱՏՄԱՔԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼԻՍԻ ՓՈՐՁ

Ս. 2. ԽԱՁԱՏՐՅԱՆ

Գերմանացի փիլիսոփա Վիլհելմ Դիլթայը շրջադարձային դեր ունի եվրոպական պատմափիլիսոփայության զարգացման գործընթացում: Նրա տեսության մեջ լավագույնս են երևում այն հիմնախնդիրները, որոնց օգնությամբ բացահայտվում են պատմափիլիսոփայական մտածողության օրինաչափությունները: Դիլթայն ապրեց 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, երբ պատմափիլիսոփայական տեսությունները սերտաճած էին փիլիսոփայական հիմնախնդիրների հետ: Եթե 18-րդ դարում պատմափիլիսոփայության նպատակը համարում էին մարդու կատարելագործումը (Կոնդորսե) կամ ապագայի կանխատեսումը (Հերդեր), ապա Դիլթայի ապրած ժամանակաշրջանում պատմության փիլիսոփայությունը շատ ավելի լուրջ խնդիրներ ուներ, և անհրաժեշտ էին նոր մոտեցումներ: Բացի այդ, 19-րդ դարի վերջը պատմության փիլիսոփայության մեջ հայտնի է որպես ճգնաժամի հաղթահարման ուղիների որոնման փուլ: Այս տեսակետից Դիլթայի պատմափիլիսոփայական տեսությունը ձևավորվեց նախորդների մեթոդները հասկանալու և դրանց հիման վրա նոր մեթոդներ գտնելու միտումներից:

Պատմափիլիսոփայական մտքի էվոլյուցիան

Մինչ Դիլթայի հայացքների շարադրանքին անցնելը, կարծում ենք, անհրաժեշտ է ներկայացնել պատմափիլիսոփայական մտքի էվոլյուցիան, ինչը կօգնի լավ հասկանալու գերմանացի փիլիսոփայի տեսությունը: Ըստ էության պատմափիլիսոփայությունն առաջացավ որպես ֆրանսիացի փիլիսոփա Դեկարտի տեսության հակոտնյա: Ընդհանրապես, Դեկարտի դերը նոր և նորագույն փիլիսոփայության պատմության մեջ շփազանց ազդեցիկ է: Նա ճանաչողության տեսության մեջ երկու կարևոր խնդիր է դնում: Առաջինը՝ ճշմարտության հավաստիությունը ինքնագիտակցության մեջ գտնելու մոտեցումն է, երկրորդը՝ իմացության օբյեկտի և սուբյեկտի տարանջատումը: Փիլիսոփայության պատմության հետագա ընթացքը հիմնականում կենտրոնանում է այս երկու հիմնահարցերի վրա:

Բնականաբար պատմության փիլիսոփայությունը ևս անմասն չմնաց կարտեզիականության ազդեցությունից: Այդ ազդեցությունը դրսևորվեց թե բացասական և թե դրական երանգներով: Մասնավորապես, իտալացի փիլիսոփա Զամբարտիստա Վիկոն դեկարտյան դարաշրջանի փիլիսոփայության մեջ տեսնելով նատուրալիզմի միտումներ՝ փորձեց, ի հեճուկս դրանց, ստեղծել *scienza nuova* (նոր գիտություն): Վիկոն զարմանքով նշում է, որ փիլիսոփաները, մոռացության մատնելով սեփական մարդկային աշխարհի ճանաչողությունը, զբաղված են բնության ճանաչման հարցով: Իտալացի փի-

լիստփան առաջ քաշեց մի գաղափար, որը նորութուն էր սոցիալական փիլիսոփայության մեջ. «Քաղաքացիական աշխարհը ստեղծվել է մարդկանց կողմից, և հենց այդ պատճառով քաղաքացիական աշխարհի մասին գիտությունը կարող է հասանելի լինել մարդկանց համար»¹: Պատմության փուլերը հետք են թողնում մարդկային ոգու մեջ: Այսպիսով, Վիկոն պատմական ճանաչողության հիմքում դնում է ներհատուկության գաղափարը և փորձում լուծել կարտեզիականության ամենախոցելի հարցը. օբյեկտ-սուբյեկտ հարաբերության մեխանիկական, արհեստական դրվածքը: Մինչև 19-րդ դարը պատմափիլիսոփայությունն, ըստ էության, շքնարկեց պատմական ճանաչողության խնդիրը, և Վիկոյի խորիմաստ միտքը՝ օբյեկտը սուբյեկտից բըխեցնելու մասին, պատմության փիլիսոփայության մեջ մնաց անտեսված: Պատմության փիլիսոփայությունը բավական մանրամասն քննարկեց գերմանական փիլիսոփայության ներկայացուցիչ Շելլինգը: Բայց վերջինս պատմափիլիսոփայությանը մոտեցավ կառուցվածքային տեսանկյունից՝ կենտրոնանալով պատմության սահմանների հստակեցման խնդրի վրա: Նրա կարծիքով, միայն սահմաններ ունեցող պատմությունը կարող էր հավակնել գիտականության: Դասական փիլիսոփայության մյուս ներկայացուցիչը՝ Կանտը, մեծ վաստակ ունի ճանաչողության տեսության ոլորտում, սակայն պատմությունը դիտարկելով ընդամենը «բնության գաղտնի ծրագրի իրականացում»՝ ըստ էության երկրորդական է դարձնում պատմափիլիսոփայությունը: Շրջադարձային նշանակություն ունեցավ Հեգելի պատմափիլիսոփայությունը, որը հիմնականում բացասական գնահատվեց, քանզի գերմանացի փիլիսոփան, օգտագործելով պանլոգիստական մեթոդ, պատմությունը դիտեց ընդամենը որպես Համաշխարհային Ոգու ինքնաճանաչման միջոց: Նման միակողմանի վերաբերմունքի արդյունքում պատմափիլիսոփայական գրականության մեջ անտեսվեց Հեգելի արժանիքներից մեկը: Նա առաջինը զգաց այն բարդությունը, որ կարող է առաջանալ պատմափիլիսոփայության ձևավորման ճանապարհին: «Պատմության փիլիսոփայությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ պատմության մտածական դիտարկում... Բայց այստեղ մտածական լինելու փաստարկը կարող է անբավարար համարվել, քանի որ պատմության մեջ մտածողությունը ենթարկվում է առկային և էությունականին..., իսկ փիլիսոփայությանը վերագրվում են ինքնուրույն մտքեր, որոնք հայեցողությունը ծընում է իրենից՝ հաշվի չառնելով ռեալությունը: Եթե փիլիսոփայությունը պատմությանը մոտենա նման մտքերով, ապա նրան կնայի որպես նյութի՝ վերափոխելով այն իր մտքին համապատասխան և կառուցելով a priori»²: Այսպիսով, Հեգելը վարպետորեն նկատում և մեկնաբանում է պատմության փաստականությունը և փիլիսոփայության վերացականությունը համադրելու բարդությունը: Բայց գերմանացի փիլիսոփան լուծումը տեսնում է համաշխարհային-պատմական գործընթացին բանականություն վերագրելու մեջ, ինչով ըստ էության շրջանցում է պատմական գիտելիքի առանձնահատկության հարցը: Ակնհայտ է, որ Հեգելի պանլոգիզմի փիլիսոփայությունը չէր կարող բավարարել 19-րդ դարում ճգնաժամ ապրող փիլիսոփայությանը: Փիլիսոփայական հետհեգելյան շրջանը գերմանացի փիլիսոփա Հերբերտ Շնյոդել-բախը իրավացիորեն անվանեց «փիլիսոփայության ինքնության ճգնաժամ»³: Այս միտքը բավական դիպուկ է արտացոլում փիլիսոփայության վիճակը: Հանս-Գեորգ Գադամերի կարծիքով 19-րդ դարի փիլիսոփայական գիտակ-

¹ Д. Вико. Основания новой науки об обществ. природе нации, М., 1940, стр. 108.

² В. Гегель, Философия истории, Антология философии истории, М., 1995, стр. 76.

³ Н. Schnädelbach, Philosophy in Germany, Cambridge University Press, 1984, p. 5.

ցության արժանիքը պատմական գիտակցության հետ նրա սերտաճումն է։ Այսպիսով, կարող ենք ասել, որ փիլիսոփայության ճգնաժամը հավասարապես վերաբերում էր նաև պատմափիլիսոփայությանը։ Ամերիկյան փիլիսոփա Չարլզ Բամբախը նշում է, որ Նիցշեի «Աստված մեռավ», Շպենգլերի «Հուճարի մղձավանջը», Հուսեոլի «Եվրոպական գիտությունների ճգնաժամը», Տրյոլչի «Պատմականության ճգնաժամը» հիմնադրույթներով վերջ դրվեց պատմության միագիծ առաջընթացի տեսության ազդեցությանը, և տիրապետող դարձավ սկեպտիկ մտածողությունը։

Պատմափիլիսոփայության ճգնաժամի պատճառներից մեկը պետք է համարել պոզիտիվիզմը, որը փորձեց բնագիտական մեթոդները կիրառել փիլիսոփայության բոլոր բնագավառների՝ այդ թվում պատմափիլիսոփայության մեջ։ Փաստորեն, պոզիտիվիստները առաջարկեցին ընդհանուր օրենքները կիրառել նաև պատմության մեջ։ Զեպտորելով սոցիոլոգիան՝ առաջին պոզիտիվիզմի ներկայացուցիչները բնականաբար կարիք ունեին ընդհանուր օրենքներին, որպեսզի կարողանային տալ հասարակության գիտական վերլուծությունը։ Բայց նրանք գնացին ավելի հեռու՝ ընդհանուր օրենքները կիրառելով նաև պատմության մեջ։

Պատմափիլիսոփայության վերացական և գիտական բնույթը նպաստեց հակապատմականության ուժեղացմանը, ինչը դրսևորվեց Նիցշեի և Շոպենհաուերի ուսմունքներում։ Հակապատմականության հզորացումը դարձավ նոր պատմափիլիսոփայության խթանիչներից մեկը։ Ըստ էության բացասական գնահատելով պատմափիլիսոփայությունը՝ Նիցշեն հուշում է նոր պատմափիլիսոփայության անհրաժեշտությունը։ Պատահական չէ, որ նրա «արժեքների վերագնահատման» պահանջը վերածվեց նոր փիլիսոփայության կարգախոսի։ Իսկ Շոպենհաուերը, շարունակելով Արիստոտելի միտքը, պնդում է, թե պոեզիայի մեջ ավելի ճշմարտություն կա, քան պատմության մեջ։ Նրա համար հիմք է ծառայում նաև հին աշխարհի մեկ այլ հայտնի փիլիսոփայի՝ Պլատոնի միտքն այն մասին, թե առաջացում և վախճան շունեցողը էութենականն է, առաջացում և վախճան ունեցողը՝ ոչ էութենականը։ Դժվար չէ ենթադրել, որ պատմականին ավելի բնորոշ է երկրորդ մեկնաբանությունը։ Բայց Նիցշեի և Շոպենհաուերի հակապատմականությունը դրական պզզեցություն զործեց ժամանակի փիլիսոփայական մտքի վրա՝ դրդելով փիլիսոփաներին նոր լուծումներ դառնելու։ Ընդհանրապես, փիլիսոփայության պատմության էվոլյուցիան բավական հետաքրքիր ու կարևոր խնդիր է։ Դրա խորաթափանց ուսումնասիրությունը նպաստում է ճիշտ հասկանալու և արժևորելու փիլիսոփայության պրոբլեմատիկան։ Ուսումնասիրության նման մեթոդի կիրառումը նպաստում է հասկանալու այն կարևոր միտումը, որ ինչոր մի հարցի ժխտումով սկիզբ է դրվում զարգացման որակական նոր փուլի։

Նոր պատմափիլիսոփայությունը ճգնաժամի հաղթահարման ելքը փորձեց գտնել ճանաչողության տեսության մեջ։ Այսպիսով, նոր պատմափիլիսոփայության առանցքը ճանաչողության այն հիմնախնդիրն է, թե ինչպես է հնարավոր պատմության ճանաչումը, պատմական գիտելիքը։ Եվ պատահական չէ, որ մեր դարաշրջանի անգլիացի պատմափիլիսոփա Կոլլինզվուդը պատմության փիլիսոփայություն ասելով հասկանում էր ուսմունք պատմական գիտելիքի և ճանաչողության մասին։ Իսկ ռուս փիլիսոփա Մեծուկը նշում է, թե «պատմության փիլիսոփայությունը ոչ այնքան պատմական գործընթացի տեսություն է, որքան պատմական ճանաչողության տեսություն, էպիստեմոլոգիա»⁴։

⁴ В. Межуев, Философия истории и историческая наука. — «Вопросы философии», 1994, № 4, стр. 75.

Դեռևս երեք դար անաչ Դեկարտի՝ մեթոդ ստեղծելու կոչը հրատապ է դառնում նաև 19-րդ դարի երկրորդ կեսին: Ժամանակի փրկիսոփաներից շատերը համոզված էին, թե փրկիսոփայական նոր մեթոդի միջոցով հնարավոր կլինի լուծել գիտության և պատմության հիմնարար խնդիրները և հաղթահարել ճգնաժամը:

Պատմափրկիսոփայության ճգնաժամի հաղթահարման և նոր մեթոդի ստեղծման գործում բավական մեծ ներդրում ունի Վիլհելմ Դիլթայը, որի տեսությունը կարելի է համարել առավել հաջողակներից մեկը: Դիլթայը ծնվել է 1833 թ., զբաղվել է աստվածաբանությամբ, որից հետո փրկիսոփայությամբ և պատմագիտությամբ: Դիլթայի աշխատանքներից հատկապես կարևոր են «Ներածություն ոգու մասին գիտությունների» (1883), «Գաղափարներ նկարագրական և վերլուծական հոգեբանության վերաբերյալ» և այլն:

Դիլթայի պատմափրկիսոփայության ակունքները

Ընդունված է այն տեսակետը, որ Դիլթայի պատմափրկիսոփայությունը հիմնվում է պոզիտիվիզմի, Պատմական դպրոցի և Կանտի տեսության վերլուծության վրա: Դիլթայի տեսության վրա բավական լուրջ ազդեցություն թողած տեսություններից առաջինը պոզիտիվիզմն է: Դիլթայի համար հատկապես առաջնային էր գիտությունները նորովի համակարգելու պոզիտիվիստական տեսակետը: Ըստ Դիլթայի, այդ համակարգման հիմքում պետք է լիներ ոչ թե վերացականությունը, այլ էմպիրիկ հետազոտությունը: Գերմանացի փրկիսոփա Հայդեգերի կարծիքով Դիլթայի համար ընդունելի էր նաև մետաֆիզիկայի պոզիտիվիստական քննադատությունը, քանզի նա ընդունում էր գիտական ճանաչողություն ստեղծելու անհրաժեշտությունը: Բայց Դիլթայի տարածայնությունները պոզիտիվիստական դպրոցի հետ ավելի էական են, քան նմանությունները: Այս առնչությամբ Հայդեգերը ընդգծում է, որ պոզիտիվիզմը սխալ հասկացավ հոգևոր աշխարհը և նրա պատմությունը: Նա փորձեց ոգին սահմանել որպես բնություն, բնական: Մինչդեռ Դիլթայի փրկիսոփայության խնդիրն էր պահպանել հոգեկան աշխարհի յուրահատկությունը: Դեռևս վաղ շրջանում Դիլթայը մտադիր էր գրել «Ի հակադրություն էմպիրիզմի և հայեցողության՝ իրականության և փորձի տեսակետից գիտական ուսումնասիրության ներածություն» վերնագրով աշխատություն՝ Հեգելի և պոզիտիվիզմի փրկիսոփայությունները քննադատելու նպատակով: Ըստ էության, պոզիտիվիզմը լոկի և Հյուսիսի էմպիրիզմի շարունակությունը դարձավ: Երկու դեպքում էլ գիտելիքի աղբյուրը փնտրում են արտաքին աշխարհում: Մինչդեռ Դիլթայը փորձում էր այդ աղբյուրը գտնել ներսում: Ընդ որում, պոզիտիվիզմի երկու հայտնի ներկայացուցիչները՝ Կոնտը և Միլլը, միահամուռ մերժեցին հոգեբանության նշանակությունը՝ այն համարելով տրամաբանորեն հակասական գիտություն: «էմպիրիզմը նույնքան վերացական է, որքան հայեցողական մտածողությունը»⁵:

Դիլթայի տեսության մյուս աղբյուրը Պատմական դպրոցն է, որի ներկայացուցիչներից հատկապես հայտնի են Ռանկեն և Դրոյզենը: Պատմական դպրոցի ներդրումը պատմափրկիսոփայության մեջ այն է, որ առաջ քաշվեց մարդու և սոցիալական համակարգի պատմականության սկզբունքը: Արժեքելով պատմական դպրոցի ուսմունքը՝ Դիլթայը նշում է, թե «այն դիտարկման էմպիրիկ եղանակ է... որը նպատակ ունի առանձին երևույթները սահմանել զարգացման համատեքստում»⁶: Դիլթայի համար կարևոր էր պատ-

⁵ W. Diltthey, Introduction to the Human Studies, Princeton, 1989, p. 173.

⁶ Նույն տեղում, էջ 48:

մական դպրոցի տեսակետը պատմագիտական առարկաները բնագիտակա-
նից տարբերակելու հարցում: Բայց Դիլթայի կարծիքով Պատմական դպրոցի
մոտեցումը տարբերային է, քանզի այն զուրկ է փիլիսոփայական հիմքերից:
Այդուհանդերձ, Դիլթայը բարձր է գնահատում այս դպրոցի դերը փիլիսո-
փայությունը գիտականացնելու միտումը ժխտելու հարցում:

Կանտից սկսվեց բնության և պատմության հակադրումը: Կանտի փիլի-
սոփայությունը Դիլթայի համար կարևոր է ճանաչողության տեսության ա-
ռումով: Ինչպես Կանտը, այնպես էլ Դիլթայը դնում է ճանաչողության էս-
թյան հարցը: 1867 թ. ելույթ ունենալով Բազելի համալսարանում՝ Դիլթայը
ընդգծում է. «Բոլոր ժամանակների փիլիսոփայական հիմնարար խնդիրը
դրվել է Կանտի կողմից: Դա մարդկային բոլոր կարգի ուսումնասիրություն-
ների բարձրագույն և համապարփակ հարցն է. ի՞նչ ձևով է աշխարհը մեզ
տրված»: Այսպիսով, իր տեսության հիմքում դնելով ճանաչողության տեսու-
թյան հիմնական հարցը՝ Դիլթայը փորձում է մշակել նոր մոտեցում: Կան-
տի «Զուտ բանականության քննադատություն» աշխատությանը հակադրելով
«Պատմական բանականության քննադատություն» աշխատությունը՝ Դիլթայը
փորձում է հաղթահարել դասական փիլիսոփայության ներկայացուցչի ճա-
նաչողության տեսության ֆիզիկա-մաթեմատիկական, ստատիկ բնույթը:
Կանտը փորձեց էպիստեմոլոգիայի խնդիրները լուծել *a priori* ելակետերով,
որոնք ապահովում են գիտելիքի կապը արտաքին աշխարհի հետ: Մինչդեռ
Դիլթայի համար կյանքի միակ *a priori* ելակետը պատմական փորձն է:
«Կանտի *a priori*-ն կոշտ է և մահացած»: Գերմանացի փիլիսոփան շի ըն-
դունում զուտ և էմպիրիկ գիտելիքներ տարբերակելու կանտյան մոտեցումը:
Զուտ գիտելիք լինել չի կարող, քանզի մարդկային գիտակցությունը ժամա-
նակայնորեն և մշակութաբանորեն դետերմինավորված է:

Դիլթայի պատմափիլիսոփայության հիմնադրույթները

Դիլթայն ուներ երկու խնդիր. հաղթահարել նորկանտական սցինեստիզմը
և խուսափել պատմական ռեյատիվիզմից: Այլ կերպ ասած՝ գտնել գիտու-
թյան օբյեկտիվ, խիստ պահանջների և պատմության ընթացքի ու ընկալման
սուբյեկտիվության, փաստականի ու արժեքայինի հատման կետը: Նա լավ
էր գիտակցում այն դժվարությունները, որոնք առկա էին պատմափիլիսո-
փայության մեջ: Չկար պատմափիլիսոփայության խնդիրների հստակ սահ-
մանազատում, քանզի այն նոր էր տարանջատվել բնափիլիսոփայությունից:
Ավելին, բավական դժվար էր պատմափիլիսոփայության դերի առանձնացու-
մը փիլիսոփայության մյուս ենթաբաժինների համակարգում: Այդ պատճա-
ռով պատմության փիլիսոփայությունը երկու ժայրահեղ բեկոներում էր հայ-
տընվել: Խնդիրն այն էր, թե ինչից սկսել. գաղափարի՞ց, թե՞ պատմական
իրադարձություններից: Առաջինի դեպքում պատմությունը հարմարեցվում է
գաղափարներին (ինչպես Հեգելը), երկրորդ տարբերակը տանում է ավելի
շուտ դեպի պատմագիտություն, քան պատմափիլիսոփայություն: Հստոնացի
փիլիսոփա Լոտենն իր «Ժամանակակից պատմության փիլիսոփայություն»
աշխատության մեջ տարբերակում է երկու մոտեցում՝ հայեցողական և էմ-
պիրիկ: Առաջինը փաստերը հարմարեցնում է բանականությանը, երկրորդը՝
հակառակը: Այսպիսով, խնդիրն այն է, որ եթե հիմք ընդունենք իրական
պատմությունը, ապա վերանում է գաղափարը, իսկ եթե սկսենք գաղափա-
րից, ապա կորչում է ռեալ պատմությունը: Նման երկակիությունը պոռձ մը-

տաժողների տարավ դեպի հոռետեսություն: Մասնավորապես, Շոպենհաուերը և Բուրկիսարդտը պատմությունը համարեցին «գիտություններից առավել ոչ գիտականը»⁸:

Հասկանալով այս իրավիճակը՝ Դիլթայը հակված էր նոր լուծում գրտնելու: Նախևառաջ պետք էր պատմափիլիսոփայության նոր հիմք: Բանականությունը որպես պատմափիլիսոփայության հիմք ծառայեցնելու հեգելյան մոտեցումը ոչ միայն վերացական էր, այլև կասկածի տակ դրեց պատմափիլիսոփայության գիտականությունը: Վերացականությունից ձերբազատված չէր նաև նորկանտականներ Վինդելբանդի և Ռիկկերտի քափուղգիական ուսմունքը: Բնական է, որ ժամանակը պահանջում էր էմպիրիկ հիմք: Դիլթայի պատմափիլիսոփայության մեջ առանցքային նշանակություն ունի «պատմական փորձի» հասկացությունը: Սա այն կարևոր հասկացություններից է, որոնց օգնությամբ նա փորձում է հաղթահարել Ռիկկերտի և Վինդելբանդի պատմափիլիսոփայության վերացականությունը: Ողջ ճշմարտությունը փորձի մեջ է: Նորկանտականները, զգալով պատմական սուբյեկտիվության և էպիստեմոլոգիական օբյեկտիվության հակասականությունը, փորձեցին կառուցել տրանսցենդենտալ սուբյեկտ, որի էությունը դուրս է ժամանակային սահմանումներից: Դիլթայը համաձայնում է նրանց հետ այն հարցում, թե պատմական փորձը պետք է ունենա որոշակի մեթոդաբանական հավաստիություն: Բայց նա պատմական էպիստեմոլոգիայից այն կողմ է գնում՝ դեպի գոյաբանություն: Գիտելիքը չի պահանջում տեսական արխիտեկտոնիկա, այլ արմատավորված է կյանքի փորձի մեջ:

Հենվելով պրակտիկ հիմքի վրա՝ Դիլթայը պատմության հիմքում դրեց մարդուն՝ ընդգծելով, որ «յուրաքանչյուր սկիզբ կամայական է, այլ ոչ բացարձակ»⁹: Նա փորձեց դնել մարդու պատմականության խնդիրը՝ նշելով, թե պատմությունը մեր գոյության մասնիկն է: «Ի՞նչ է մարդը» հարցի պատասխանը մարդուն տալիս է պատմությունը¹⁰, — գրում է ռուս փիլիսոփա Լյուբբին՝ անդրադառնալով Դիլթայի պատմափիլիսոփայության հիմնականերին: Այս հարցի մասին Դիլթայի տեսակետն առավել բնորոշ է արտահայտված հետևյալ խոսքերում. «Պատմագիտության հիմքում այն փաստն է, որ ես ինքս պատմական էակ եմ»¹¹: «Յուրաքանչյուր փաստ մարդաստեղծ է, հետևաբար՝ պատմական», — նշում է Դիլթայը «Մարդկային ուսումնասիրություններ» աշխատության մեջ¹²: Բայց մարդուն հռչակելով պատմափիլիսոփայության հիմք՝ Դիլթայը դեռևս ոչինչ չի ասում: Բազմաթիվ այլ գիտություններում ևս մարդն է համարվում հիմք: Այսինքն, Դիլթայը պետք է կոնկրետ մեխանիզմներով ամրագրեր մարդու հիմնարար դերը պատմափիլիսոփայության մեջ:

Իր պատմափիլիսոփայության հիմքում դնելով մարդուն՝ Դիլթայը պետք է առաջին հերթին պատասխաներ այն հարցին, թե ինչպե՞ս է նա ճանաչում պատմությունը: Օբյեկտ-սուբյեկտ փոխհարաբերությունը պատմափիլիսոփայության սուպրաբզում արդեն սպառել էր իրեն, և պետք էր նոր լուծում: Իր նպատակը համարելով ճանաչողության նոր տեսության ստեղծումը՝ Դիլթայը հասկանում էր բոլոր այն խոչընդոտները, որոնք առաջանում են օբյեկտ-

⁸ «Словарь античности», М., 1989, стр. 86.

⁹ W. Dilthey, *Եղվ. աշխ.*, էջ 5:

¹⁰ Г. Люббе. О сокращении нашего пребывания в настоящем, «Вопросы философии», 1994, № 4, стр. 97.

¹¹ W. Dilthey, *Եղվ. աշխ.*, էջ 278.

¹² Sб' W. Dilthey, The Human Studies, Culture and Society, Cambridge, 1994, էջ 38:

սուբյեկտ մեխանիզմի վրա հիմնված ճանաչողական տեսություններում: Նա փորձնց ստեղծել մի տեսություն, որտեղ պատմությունը չլինի միայն օբյեկտ: Դրա համար պետք էր ընդունել որոշակի ներհատուկ ընդհանրություններ պատմության և մարդու միջև: Խուսափելով օբյեկտ-սուբյեկտ հարցադրումից, Դիլթայը նույնքան կարևորում էր ճանաչողական և արժեքային ռելյատիվիզմի հաղթահարումը, ինչը նա տեսնում էր նոր մեթոդաբանության ըստեղծման միջոցով: Այս խնդիրները լուծելու համար Դիլթայը որակապես նոր մակարդակով վերադառնում է Վիկոյի անուշադրության մատնված մըտքին՝ ասելով, թե պատմությունը կարող է ճանաչել նա, ով ստեղծում է այն: Այս պնդումով արդեն Դիլթայը հաղթահարում է օբյեկտ-սուբյեկտ հակադրումը և ընդունում դրանց միասնականությունը:

«Պատմության գաղափարը» աշխատության մեջ անգլիացի պատմափիլիսոփա Կոլլինգվուդը հակիրճ շարադրում է պատմափիլիսոփայական բոլոր հայտնի տեսությունների ընդհանուր սկզբունքները: Խոսելով Դիլթայի տեսության առավելությունների մասին՝ Կոլլինգվուդը ընդգծում է, որ, ըստ նրա տեսության, պատմաբանը ապրում է իր օբյեկտի մեջ կամ օբյեկտին է պարտադրում ապրել իր մեջ: Դիլթայի այս համոզմունքը միանշանակ ընդունելը ճիշտ չէ, քանզի այստեղ կա մի նրբերանգ, որը լուրջ բացատրության կարիք ունի: Արդյո՞ք օբյեկտի մեջ լինելը կամ օբյեկտը իր մեջ առնելը կիրառելի է պատմափիլիսոփայության մեջ: Չէ՞ որ կա անցյալի խնդիր: Այսինքն, ինչպե՞ս է հնարավոր նույնականություն պատմական տվյալ շրջանում ապրող մարդու և անցյալի միջև: Ահա այն դժվարագույն խնդիրը, որին պետք է պատասխաներ Դիլթայը: Նշենք, որ Դիլթայի նույնականություն ստեղծելու սկզբունքը ուներ հակառակորդներ: Մասնավորապես, Ռիկկերտի կարծիքով ռեալ օբյեկտի և այդ օբյեկտի հասկացությունները տարբեր են: Նորկանտական Ռիկկերտի համար ռեալ օբյեկտի և դրա հասկացության միջև կա նույնպիսի հարաբերություն, ինչպիսին ընդհանուրի և եզակիի միջև: Կոլլինգվուդը, բարձր գնահատելով Դիլթայի տեսակետը նույնականության մասին, իրավացիորեն ընդգծում է մի դժվարություն՝ ինչպե՞ս է ապահովվում նույնականություն անցյալի հետ: Նման դատողության համար հիմք է ծառայում Դիլթայի այն սկզբունքը, որ կյանքի հիմքում անմիջական փորձն է: Այսինքն, ինչպե՞ս է ստացվում, որ անմիջական փորձի հիման վրա հնարավոր է դառնում ռեֆլեքսիա կատարել:

Հետևաբար անհրաժեշտ էր նոր հենք, որի օգնությամբ պետք է ապահովվեր նաև տարածամանակային կապը: Որպես այդպիսի հիմք դարձավ հոգեբանությունը: Դիլթայը գտնում է, որ միայն հոգեբանական վերլուծության շնորհիվ է հնարավոր հասկանալ սեփական ԾՄ-ը: Սակայն Դիլթայի ապրած ժամանակաշրջանում հոգեբանության առարկայի շուրջ բավական հակասական գնահատականներ կային: Բնագիտության բուռն զարգացման ֆոնի վրա հարց էր դրված, թե ինչքանո՞վ հոգեկան կյանքը ևս կարելի է բնագիտության ուսումնասիրության առարկա դարձնել: Գերմանացի հայտնի մտածող Յոհան Լեբբարտը հոգեբանության բնագիտացման հիմնական կողմնակիցներից էր: Նա գրում է «Հոգեբանությունը որպես փորձով, մետաֆիզիկայով և մաթեմատիկայով նորովի հիմնավորված գիտություն» աշխատությունը, որտեղ նշում է, թե հոգեկան հարցերը կարիք ունեն այնպիսի ճշգրիտ պատասխանների, ինչպիսիք առկա են բնագիտությունում: Ըստ Լեբբարտի, «հոգեբանությունը հոգու ստատիկա և դինամիկա է», որը պետք է մաթեմատիկորեն արտածի և փորձով հաստատի այդ շարժման օրենքները: Դիլթայը հակադրվում է հոգեբանության նման ընկալմանը՝ գտնելով, որ այն հոգևոր գիտություն է: Այդ պնդման համար Դիլթայն արժանացավ խիստ

քննադատության, քանզի ժամանակակիցների ճնշող մեծամասնությունը պընդում էր, որ հոգեբանությունը բնագիտական հիմքեր ունի: Հոգեբանության վրա հիմնվելով՝ Դիլթայը փորձում էր լուծել պատմության ճանաչողության նոր մեթոդի խնդիրը: Նրա տեսության համաձայն, անմիջական փորձը գոյարանական է, իսկ հոգեբանությունը ճանաչողական գործառույթ պիտի կատարի՝ օգնելով հասկանալու գործընթացին: Կոլլինգվուդը նշում է, որ ճանաչողության հարցում հենվելով հոգեբանության վրա, Դիլթայը նսեմացնում է պատմաբանի դերը և գերազանահատում հոգեբանին: Ավելին, Կոլլինգվուդը նրան մեղադրում է պոզիտիվիզմի մեջ, քանզի հոգեբանությունը համարելով պատմական ճանաչողության հիմք՝ Դիլթայն ընդունում է միայն գիտական գիտելիքի հնարավորությունը: Հոգեբանության մասին Դիլթայի տեսակետի շուրջ տարբեր գնահատականներ կան: Ի տարբերություն Կոլլինգվուդի, էրնստ Տրյուլլը փորձում է ավելի լեալ գնահատականներ տալ: Նրա կարծիքով Դիլթայը հակադրվում է փորձնական հոգեբանությանը և ձևավորում հոգեբանության՝ որպես հոգու մասին գիտության, համադրույթը: Ընդ որում, Դիլթայն ընդունում էր հոգու ինքնատիպության գաղափարը: Ըստ էության Դիլթայի խնդիրն էր վերլուծական հոգեբանությունից անցնել նկարագրական հոգեբանության: Եթե վերլուծական հոգեբանությունը առանձին անհատի հոգեկան աշխարհը, հոգեբանական էգո-ն փորձում էր հակադրել հասարակությանը և պատմությանը, ապա Դիլթայն իր «նկարագրական և վերլուծական հոգեբանությանն առնչվող գաղափարներ» աշխատության մեջ մարդու կենսափորձը (Erlebnisse) դիտարկում է այն սոցիալ-մշակութային համատեքստում, որում այն առաջացել է: Գերմանացի փիլիսոփայի կարծիքով կենսական փորձը մեզ պատկերացում է տալիս ընդամենը կյանքի կառուցվածքային տարրերի մասին: Նման պարագայում նկարագրական հոգեբանությունը պետք է դառնար Դիլթայի տեսության այն հիմնաքարը, որի օգնությամբ ապահովվեին անհատական կյանքի և մարդկային աշխարհի միասնականության ընկալումը: Նկարագրական հոգեբանության սաղմնավորման խնդիրը պայմանավորված էր Դիլթայի տեսության որոշ սկզբունքներով: Քանն այն է, որ նա ընդունում էր նոմոթետիկ (ընդհանուր) և իդեոգրաֆիկ (ճգակի) մեթոդների բաժանման վիճակը: Բանդերսոնի մեթոդը, որոնցից առաջինը կիրառելի էր բնական գիտություններում, իսկ երկրորդը՝ հումանիտար գիտություններում: Այդ բաժանման համաձայն, հոգեբանությունը դասվում էր բնական գիտությունների շարքին: Ուրեմն, Դիլթայը պետք է ստեղծեր հոգեբանության նոր տեսություն, որով կամուրջ ստեղծեր ընդհանուրի և եզակիի, ամբողջի և մասի միջև:

Այսպիսով, Դիլթայի պատմափիլիսոփայության հաջորդ խնդիրը մասամբողջ կապի ապահովումն էր: Գերմանացի փիլիսոփան ճանաչողության ոլորտում օբյեկտ-սուբյեկտ փոխհարաբերությանը հակադրում է մասամբողջ հարաբերությունը: Կոլլինգվուդը իրավացիորեն նշում է, որ «Դիլթայը չի բավարարվում այն փաստարկով, թե հումանիտար գիտությունները ուսումնասիրում են եզակին, քանզի այդ դեպքում բոլոր օբյեկտները դիտարկվում են մեկուսացած»¹³: Մասնավորապես, այդպես էր լուսավորականության շրջանում, երբ մարդուն դիտարկելով որպես բնության մասնիկ՝ հնարավոր չեղավ ըստ էության քննարկել մարդու խնդիրը: Դիլթայը փորձում է հաղթահարել այդ կղզիացումը և խնդիրները քննարկել ամբողջ-մաս ներդաշնակության մեջ: Հատկանշական է, որ այս հարցում գնահատականները միանշանակ չեն: Գերմանացի փիլիսոփա Տրյուլլը նշում է, որ Դիլթայը «կա»

¹³ R. Collingwood, The Idea of History, Cambridge, 1994, p. 172.

պիտուլյացիայի է ենթարկվում անհատականության դերի գերազնահատման հարցում»։ Որպես օրինակ Տրյուլը բերում է Դիլթայի ելույթը իր 70-ամյակի հանդիսության օրը, որում նա «արժեքների անարխիան» համարեց «գերմանական պատմագիտության և իր մտածողության ձևի արդյունքը»¹⁴։ Տրյուլը նման հոռետեսությունը բնորոշ է համարում բնագիտությունից հեռու կանգնած պատմաբաններին։ Սակայն Տրյուլի դիտարկումը կարելի է համարել որպես Դիլթայի հետադարձ հայացք գերմանական փիլիսոփայությանը, բայց ոչ որպես նրա փիլիսոփայական համակարգի հիմնակետ։

Ընդունելով մաս-ամբողջ օրգանական կապը՝ Դիլթայը պետք է գտներ նաև այն մեխանիզմը, որի օգնությամբ այդ ընդհանրությունն ապահովվում է։ Այս հարցադրումը Դիլթայը լուծում է հերմենևտիկայի օգնությամբ։ Նրա կարծիքով հերմենևտիկայի օգնությամբ հնարավոր կլինի հաղթահարել առկա ճգնաժամը։ «Ներածություն ոգու մասին գիտությունների» աշխատության մեջ Դիլթայը նշում է, որ «մարդը դառնում է ոգու մասին գիտությունների սուբյեկտ, երբ մենք փոխկապակցում ենք փորձը, դրսևորումը և հասկացումը իրար հետ»¹⁵։ Առարկայական և բնագիտական մեթոդներին Դիլթայը հակադրում է հասկացման մեթոդը։ «Հերմենևտիկայի առաջացումը» աշխատության մեջ գերմանացի փիլիսոփան նշում է, որ «էպիստեմոլոգիայի, տրամաբանության և մեթոդաբանության համատեքստում հերմենևտիկան կարևորագույն կապող օղակ է դառնում փիլիսոփայության և պատմագիտության միջև»¹⁶։ Գերմանացի փիլիսոփայի կարծիքով հասկացման մեթոդը անքակտելիորեն կապված է փորձի հետ։ Այդ կապակցությամբ Դիլթայը գրում է. «Հասկացումը ենթադրում է փորձ, իսկ փորձը դառնում է կենսական գիտելիք միայն այն դեպքում, երբ հասկացումը սահմանափակությունից և սուբյեկտիվիզմից մեզ տանում է դեպի ամբողջ և ընդհանուր»¹⁷։ Ըստ Դիլթայի, փորձը սուբյեկտիվ է, իսկ հասկացումը՝ կյանքի օբյեկտիվացում։ Ակնհայտ է, որ հասկացման միջոցով նա փորձում է պահպանել հիմնային սուբյեկտիվիզմը և վերջնական օբյեկտիվիզմը։ Քերես այդ նպատակով Դիլթայը տարբերակում է երկու կարգի հասկացում։ Առաջինը առնչվում է առօրյա կյանքին և փոփոխական է, իսկ երկրորդը «օբյեկտիվ բանականության» հասկացումն է, որի պահանջները խիստ են։

Հասկացման մեթոդի ընդունումով Դիլթայը հանգում է իմմանենտության սկզբունքին։ «Հասկացումը Դու-ի մեջ Ես-ի հայտնաբերումն է»¹⁸,— գրում է Դիլթայը։ Այս սկզբունքը տարածվում է նաև պատմական ճանաչողության վրա։ Ըստ Դիլթայի, պատմական գիտելիքի առանձնահատկությունը ներսից հասկանալու ընդունակությունն է։ Իրականության մասին գիտելիքը ներհատուկ է մարդուն, արժևորման սկզբունքները զարգանում են մարդու մեջ։ Հասկացման մեթոդի օգնությամբ Դիլթայը փորձում է նույնականություն հաստատել ներկայի և լանցյալի միջև, ինչը նրան հնարավորություն է տալիս խուսափել պարզունակ պատմականացումից և անցյալի մեխանիկական, արհեստական օբյեկտիվացումից։

Ամփոփելով նշենք, որ Դիլթայն այն փիլիսոփաներից է, որը պատմափիլիսոփայական բոլոր տեսություններն ուսումնասիրելով՝ փորձեց հաղթահարել առկա ճգնաժամը։ Իսկ ճգնաժամը կապված էր պատմափիլիսոփայության մեջ վերացականության և հարաբերականության միտումների բացար-

¹⁴ Эрст Трелья, Историям и его проблемы, М., 1994, стр. 111.

¹⁵ W. Dilthey, The Human Studies, Culture and Society, Cambridge, 1994, p. 35.

¹⁶ W. Dilthey, The Rise of Hermeneutics, GS, volume 5, Princeton, 1984, p. 331.

¹⁷ W. Dilthey, The Human Studies, Culture and Society, Cambridge, 1994, p. 37.

¹⁸ W. Dilthey, Introduction to the Human Studies, p. 191.

ձակացման հետ: Դիլթայը փորձեց հաղթահարել այս բևեռացումը: Դիլթայի պատմափիլիսոփայական հայացքները կարելի է բնութագրել որպես դուալիստական, թեև նկարագրական հոգեբանության սաղմնավորումը, հերմենևտիկական մեթոդի կիրառումը նոր մոտեցումներ էին պատմափիլիսոփայության մեջ, բայց Դիլթայը հենվեց մի կողմից Պատմական դպրոցի ռելյատիվիզմի, մյուս կողմից՝ պոզիտիվիստական սցիենտիվի վրա: Ընդունելով սուբյեկտիվ հիմքը՝ Դիլթայը նպատակ էր դրել հասնելու կյանքի օբյեկտիվացման: Հենց այս պատճառով է, որ Դիլթային կարելի է համարել դուալիզմի կողմնակից: Փիլիսոփայության պատմությունը ցույց է տալիս, որ դուալիստական տեսությունները սովորաբար խոցելի են լինում: Դա կարելի է տեսնել Դեկարտի, Կանտի տեսությունների օրինակով: Դիլթայի պարագայում ևս այս օրինաչափությունը գործեց: Նրան մեղադրեցին ինչպես ռելյատիվիզմի, այնպես էլ սցիենտիվի մեջ: 1911 թ. էդմունդ Հուսեռին ուղղված նամակում Դիլթայը մերժում է բոլոր մեղադրանքները, որոնցով նրան համարում էին ռելյատիվիզմի, պսիխոլոգիզմի կողմնակից: Ուշագրավ է, որ Դիլթայը շատ լավ հասկանում էր իր տեսության դուալիստական ուղղվածության բարդությունները: Նա ընդունում էր, որ պատմական գիտակցության զարգացումը խարխուլում է փիլիսոփայության համապարփակ հավաստիության հիմքերը: Այսպիսով, պատմափիլիսոփայության մեջ օբյեկտիվ լուծումների հասնելու Դիլթայի նպատակը մնաց անհասանելի: Բայց Դիլթայը ճիշտ հասկացավ պատմափիլիսոփայության «աքիլլեսյան գարշապարը», ինչըն արդեն մեծագույն նվաճում է: Նրա տեսությունը հիմք դարձավ պատմափիլիսոփայական նոր տեսությունների առաջացման:

С. О. ХАЧАТРЯН — Философия истории В. Дильтея как попытка преодоления кризисного сознания.—Представлены историко-философские взгляды немецкого философа XIX—XX вв. В. Дильтея.

Дается краткий очерк историко-философской проблематики и источники философии истории Дильтея. Главным достижением философии истории Дильтея является попытка создания такой системы, где в составе лежит объективное познание исторической действительности. В основе философии истории Дильтея—человек. Для Дильтея связь человека с историей обеспечивается созданием описательной психологии методом понимания.